ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի <<Գյումրու թիվ 11 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի դասվարի և մաթեմատիկայի ուսուցչի /16 դասաժամ / թափուր տեղերի համար։

Մրցույթն անցկացվում է 2 փուլով՝ թեստավորման և հարցազրույցի։ Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ կողմից մշակված հարցաշարի։ Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին։

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում / ձև 1 / , մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ /դիպլոմ/,
- անձը հաստատող փաստաթուղթ
- << Հանրակրթության մասին >> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը /առկայության դեպքում/,
- ինքնակենսագրություն /Ձև 5/
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ։
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ։
- Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հաստատող փաստաթղթեր /առկայության դեպքում /,
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ։

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում։ Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք։

Փաստաթղթերն ընդունվում են 2024 թվականի նոյեմբերի 18 -ից մինչև 2024 թվականի նոյեմբերի 29-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչև 15:00-ը , բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից։

Մրցույթը տեղի կունենա 2024 թվականի դեկտեմբերի 3-ին, ժամը 13:00-ին, ՀՀ Շիրակի մարզի <<Գյումրու թիվ 11 հիմնական դպրոց >> ՊՈԱԿ-ում։

Տեղեկությունների համար զանգահարել /0312/ 6-42-91։